ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Ժենյա Նազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 2023 թվականի հոկտեմբերի 16-ից հոկտեմբերի 20-ը ներառյալ

4. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC)

5. Գործուղման նպատակը՝

Գործուղման նպատակն էր Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի (CCAMTAC) կողմից կազմակերպվող «Կոռուպցիայի հակազդման իրավական, կազմակերպչական և ռազմավարական մոտեցումներ» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցությունը: Աշխատաժողովի նպատակն էր «Կոռուպցիայի հակազդման իրավական, կազմակերպչական և ռազմավարական մոտեցումներ» թեմայի շրջանակներում ձեռքբերված գիտելիքների ու փորձի փոխանակումը, նոր գիտելիքների ու միջազգային փորձի ձեռքբերումը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռնվել ուսումնասիրել կոռուպցիայի բնույթը, դրա ազդեցությունը պետական կառավարման, տնտեսական աճի և մակրոտնտեսական կայունության/գործունեության ցուցանիշների վրա, գիտակցել կոռուպցիայի դեմ պայքարի գործիքների պատրաստման և առաջխաղացման անհրաժեշտությունը, ծանոթանալ կոռուպցիայի դեմ պայքարի հիմունքների, կոռուպցիայի հիմնական հասկացությունների և հիմնարար սկզբունքների հետ, որոնք պետք է ընկած լինեն հակակոռուպցիոն արդյունավետ ռազմավարությունների, նորմատիվ իրավական ակտերի հիմքում:

6. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) Արժույթի միջազգային հիմնադրամի մոտեցումը կոռուպցիայի հակազդմանը և կառավարմանը,

2) Կոռուպցիայի մակարդակի գնահատականը, բարեփոխումների նպատակների սահմանումը և բարեփոխումների մեկնարկի առանցքային կետերի բացահայտումը,

3) Հակակոռուպցիոն միջոցառումների պլանավորումը,

4) Արդյունավետ հակակոռուպցիոն օրենսդրության և կառույցների հիմնարար սկզբունքները:

Աշխատաժողովի ընթացքում իրականացվել է նաև չորս մոդուլից բաղկացած գործի քննարկում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատաժողովի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ և ելույթներ քննարկման ենթակա թեմաների ու չորս մոդուլից բաղկացած գործի վերաբերյալ, ներկայացվել է կոռուպցիայի դեմ պայքարում ՀՀ փորձը, ՀՀ-ում առկա իրավիճակը, ՀՀ օրենսդրությունը հակակոռուպցիոն ոլորտում:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել, քանի որ գործուղումը ճանաչողական էր և կազմակերպվում էր շնորհանդեսների և քննարկումների միջոցով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատաժողովի ընթացքում ներկայացված տեղեկատվությունը, ուսումնասիրված միջազգային փորձն օգտակար է և կիրառելի:

Քննարկումները եղել են արդյունավետ, իսկ թեմաները՝ արդիական:

Գործուղվող՝
Իրավաբանական վարչության
օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան
Ժենյա Նազարյան

24 հոկտեմբերի 2023թ.